

««Ձի Ընդ Էյ» ՈՒՎԿ» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ արտոնորի եզրակացություն

2015թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն.....	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	8

Անկախ աուդիտորական եզրակացություն

««Ջի Ընդ Էյ» ՈՒՎԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին և տնօրենների խորհրդին

Մեր կողմից իրականացվել է ««Ջի Ընդ Էյ» ՈՒՎԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պատասխանատվությունն է մեր կողմից անցկացված աուդիտի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելը: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք համապատասխանենք վարքագծի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռքբերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Նշված ռիսկերը գնահատելիս, աուդիտորը դիտարկում է կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողությունը՝ նպատակ ունենալով նախագծել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության

արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև՝ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ««Ջի Ընդ Էյ» ՈՒՎԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Հանգամանքների լուսարանում

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ ներկայացված համադրելի տվյալները հիմնված են Ընկերության 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա, որոնց աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2015թ. հունիսի 03-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

15 հունիսի 2016թ.

Մերգեյ Ասատրյան

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն

Առաջադրանքի ղեկավար

ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծնթ.		
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և համարժեքներ	4	753,608	299,137
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	5	455,375	566,409
Այլ փոխատվություն		-	250,000
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	6	16,400	60,707
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	7	7,846	9,170
Շահութահարկի կանխավճար		2,513	-
Հետաձգված հարկային ակտիվներ	8	1,690	1,467
Այլ ակտիվներ	9	2,247	3,033
		1,239,679	1,189,923
<i>Պարտավորություններ</i>			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10	156,321	107,657
Փոխառություններ		-	7,164
Այլ պարտավորություններ և պահուստներ	11	9,933	10,376
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		-	5,565
		166,254	130,762
<i>Սեփական կապիտալ</i>	12		
Կանոնադրական կապիտալ		927,362	927,362
Գլխավոր պահուստ		2,683	1,578
Գուտակված շահույթ		143,380	130,221
Ընդամենը սեփական կապիտալ		1,073,425	1,059,161
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		1,239,679	1,189,923

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2016թ. հունիսի 15-ին խորհրդի կողմից և ստորագրվել են ղեկավարության կողմից:

Շուշանիկ Մելիքյան
 Տնօրեն



Գայանե Մալխասյան
 Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	
Ծնթ.			
Տոկոսային եկամուտ	13	105,995	134,494
Տոկոսային ծախս	13	(9,301)	(9,129)
<i>Չուտ տոկոսային եկամուտներ</i>		96,694	125,365
<i>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</i>		(75)	(514)
<i>Չուտ կոմիսիոն և այլ եկամուտներ</i>		(75)	(514)
Չուտ առևտրային եկամուտ	14	57,885	40,401
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վաճառքից զուտ վնաս		-	(584)
Այլ գործառնական եկամուտներ	15	20,216	18,845
Այլ գործառնական ծախսեր	16	(47,915)	(39,277)
<i>Գործառնական եկամուտ</i>		126,805	144,236
Հաճախորդներին տրված վարկերի (արժեզրկում)/ արժեզրկման վերականգնում	17	(15,693)	18,714
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից եկամուտ/ծախս		(5,279)	3,440
Աշխատակազմի գծով ծախսեր	18	(79,533)	(96,166)
Մաշվածություն և ամորտիզացիա		(2,855)	(3,701)
Շահույթ մինչև հարկումը		23,445	66,523
Շահութահարկի գծով ծախս	19	(9,181)	(14,770)
Տարվա շահույթ		14,264	51,753
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		14,264	51,753

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	527,362	1,262	78,784	607,408
Տարվա շահույթ	-	-	51,753	51,753
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	51,753	51,753
Կանոնադրական կապիտալի համարում	400,000	-	-	400,000
Հատկացում պահուստին Գործարքներ	-	316	(316)	-
սեփականատերերի հետ	400,000	316	(316)	400,000
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	927,362	1,578	130,221	1,059,161
Տարվա շահույթ	-	-	14,264	14,264
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	14,264	14,264
Հատկացում պահուստին Գործարքներ	-	1,105	(1,105)	-
սեփականատերերի հետ	-	1,105	(1,105)	-
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	927,362	2,683	143,380	1,073,425

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Գրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	81,253	121,401
Վճարված տոկոսներ	(9,128)	(9,220)
Վճարված կոմիսիոն վճարներ	(75)	(452)
Արտարժույթային գործառնություններից զուտ շահույթ	57,366	40,241
Ստացված այլ եկամուտներ	18,646	-
Նախկինում դուրսգրված վարկերի վերադարձ	2,961	6,148
Վճարված հարկեր, բացառությամբ շահութահարկի	(28,821)	(9,944)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(59,343)	(89,173)
Վճարումներ մատակարարներին	(3,175)	(19,374)
Այլ վճարումներ	-	(2,778)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր՝ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	59,684	36,849
Հաճախորդներին տրված վարկեր	368,233	(50,310)
Այլ փոխառություններ	-	(250,000)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ մինչև շահութահարկը	427,917	(263,461)
Վճարված շահութահարկ	(12,052)	(13,191)
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	415,865	(276,652)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ներդրումային արժեթղթերի վաճառք	-	118,965
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,531)	(1,163)
<i>Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	(1,531)	117,802
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր	-	400,000
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր	46,330	(86,445)
<i>Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	46,330	313,555
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	460,664	154,705
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(6,193)	(2,393)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	299,137	146,825
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	753,608	299,137

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ձի Ընդ Էյ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը (այսուհետ՝ «Ընկերություն») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ), որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, որի 100% փայերը պատկանում են ՀՀ ք. Երևան, Մաշտոցի պող. 18 հասցեում գրանցված «Ռենտոն Կապիտալ» ՍՊԸ-ին: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից և այն գործունեություն է իրականացնում 2010թ. օգոստոսի 3-ին տրված N 32 արտոնագրի համաձայն:

Ընկերությունը զբաղվում է արտարժույթի առքուվաճառով և վարկավորմամբ և տրամադրում է սպառողական, հիփոթեքային և առևտրային վարկեր, ինչպես նաև իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով թույլատրվող այլ գործունեություն, որը ներկայացված է ստորև՝

- ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ հրապարակային օֆերտաների միջոցով միջոցների ներգրավման,
- տրամադրել փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
- տրամադրել երաշխիքներ,
- մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում,
- գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ,
- մատուցել ֆինանսական խորհրդատվություն՝ իրականացնել տնտեսության ոլորտների շուկաների վերլուծություն, կազմել քիզնես ծրագրեր և այլն,
- գնել ու վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
- ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր և այլ արժեքներ,
- ՀՀ ԿԲ համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ:

Վարկերը տրամադրվում են ինչպես տեղական արժույթով, այնպես էլ արտարժույթով:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Մեքաստիա Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 շենք, թիվ 80 շինություն:

Ընկերությունը ք. Երևանում ունի 9 մասնաճյուղ:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2015թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նոր ընդունված ստանդարտներ, որոնք ազդում են ներկայացման և բացահայտման վրա

ՖՀՄՄ-ների և նոր մեկնաբանությունների փոփոխությունները, որոնք ուժի մեջ են 2015թ. հունվարի 1-ին և դրանից հետո ընկած ժամանակահատվածից սկսած

Ընթացիկ տարում Ընկերությունը կիրառել է մի շարք ՖՀՄՄ-ներ և մեկնաբանություններ, որոնք ընդունվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Կոմիտեի (ՀՀՄՄԿ) կողմից և կիրառելի են 2015թ. հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար :

ՖՀՄՄ-ների տարեկան վերանայումներ 2010-2012 ժամանակաշրջան

ՖՀՄՄ-ների տարեկան վերանայումներ 2010-2012 ժամանակաշրջանը ներառում է ՖՀՄՄ-ներում մի շարք ճշգրտումներ, որոնք ամփոփված են ստորև.

ՖՀՄՄ 3. «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտի վերանայմամբ պարզաբանվել է, որ պայմանական հատուցումը, որը դասակարգվել է որպես ակտիվ կամ պարտավորություն պետք է չափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, առանց հաշվի առնելու, թե պայմանական հատուցումը ՖՀՄՄ 9 կամ ՀՀՄՄ 39 ստանդարտների համաձայն ֆինանսական գործիք է, թե ոչ, ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն: Իրական արժեքի փոփոխությունները պետք է ներառվեն շահույթում կամ վնասում: ՖՀՄՄ 3-ի վերանայումները կիրառելի են 2014թ. հուլիսի 1-ից հետո տեղի ունեցող ձեռնարկատիրական միավորումների ձեռքբերումների վրա:

ՖՀՄՄ 13. «Իրական արժեքի չափումը» ստանդարտի վերանայմամբ պարզաբանվել է, որ ՖՀՄՄ 13-ի վերանայումը և դրա արդյունքում ՀՀՄՄ 29-ի և ՖՀՄՄ 9-ի վերանայումները չեն վերացրել անտոկոս կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ներկայացումը իրենց հաշվով ներկայացված գումարով՝ առանց զեղչման, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:

ՀՀՄՄ 24. «Կապակցված կողմերի բացահայտումներ» ստանդարտի վերանայմամբ պարզաբանվել է, որ կառավարող ընկերությունը, որը կառավարման ծառայություններ է մատուցում հաշվետու Ընկերությանը, հանդիսանում է նրա կապակցված կողմ: Հետևաբար հաշվետու ընկերությունը պետք է որպես կապակցված կողմ բացահայտի մատուցված կառավարման ծառայությունների դիմաց վճարման գումարները:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ վերոնշյալ վերանայումները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՄ-ների տարեկան վերանայումներ 2011-2013 ժամանակաշրջան

ՖՀՄՄ-ների տարեկան վերանայումներ 2011-2013 ժամանակաշրջանը ներառում է ՖՀՄՄ-ներում մի շարք ճշգրտումներ, որոնք ամփոփված են ստորև.

ՖՀՄՄ 3. «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտի վերանայումը պարզաբանում է, որ ՖՀՄՄ 3-ը չի կիրառվում բոլոր տեսակի համատեղ պայմանավորվածությունների համար՝ տվյալ Համատեղ Պայմանավորվածության ֆինանսական հաշվետվություններում:

ՖՀՄՄ 13-ի վերանայումը պարզաբանում է պորտֆելի բացառման շրջանակները ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման ժամանակ գուտ հիմունքով, ներառում է բոլոր այն պայմանագրերը, որոնք ներառվում են ՀՀՄՄ 39-ի և ՖՀՄՄ 9-ի շրջանակներում և հաշվառվում են վերջինիս համաձայն, անգամ

եթե տվյալ ակտիվները կամ պարտավորությունները չեն բավարարում ՀՀՄՍ 32-ի ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սահմանմանը:

ՀՀՄՍ 40. «Ներդրումային գույք» ստանդարտի վերանայմամբ պարզաբանվել է, որ ՀՀՄՍ 40. «Ներդրումային գույք» ստանդարտը և ՖՀՄՍ 3. «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտը փոխադարձ փոխարինելի չեն և երկու ստանդարտների կիրառությունը կարող է պարտադիր լինել: Հետևաբար Ընկերությունը, որը ձեռք է բերում ներդրումային գույք պետք է սահմանի թե արդյոք.

ա) գույքը բավարարում է ներդրումային գույքի սահմանմանը համաձայն ՀՀՄՍ 40. «Ներդրումային գույք» ստանդարտի,

բ) գործարքը բավարարում է ՖՀՄՍ 3. «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտի սահմանմանը:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ վերոնշյալ վերանայումները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս չեն կիրառվում Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք թողարկվել են, սակայն դեռևս ուժի մեջ չեն՝

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՍԿ	Նկարագրություն	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառությունը
ՖՀՄՍ 1. Փոփոխություններ	Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում	1 Հունվարի 2016թ.	Հետընթաց
ՖՀՄՍ 9. Փոփոխություններ	Ֆինանսական գործիքներ	1 Հունվարի 2018թ.	Հետընթաց
ՖՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28. Փոփոխություններ	Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում	1 Հունվարի 2016թ.	Հետընթաց

ՖՀՄՍ, ՀՀՄՍ և ՖՀՄՄԿ	Նկարագրություն	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառությունը
ՖՀՄՍ 11 Վերանայում	Համատեղ Պայմանավորվածությունում ներդրման ձեռքբերման հաշվառում	1 Հունվարի 2016թ.	Հետընթաց
ՖՀՄՍ 14.	Կարգավորիչ հետաձգվող հաշիվներ	1 Հունվարի 2016թ.	Հետընթաց
ՖՀՄՍ 15	Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ	1 Հունվարի 2017թ.	Հետընթաց
ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38. Փոփոխություններ	Մշակվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում	1 Հունվարի 2016թ.	Հետընթաց
ՀՀՄՍ 19. Փոփոխություններ	Աշխատակիցների հատուցումներ	1 Հուլիսի, 2014թ.	Հետընթաց
ՀՀՄՍ 27. Փոփոխություններ	Բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում	1 Հունվարի 2016թ.	Հետընթաց
ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 41. Վերանայում	Գյուղատնտեսություն: Բերքատու բույս	1 Հունվարի 2016թ.	Հետընթաց
ՖՀՄՍ տարեկան վերանայումներ	2010-2012 շրջան	1 Հուլիսի 2014թ.	Հետընթաց
ՖՀՄՍ տարեկան վերանայումներ	2011-2013 շրջան	1 Հուլիսի 2014թ.	Հետընթաց
ՖՀՄՍ տարեկան վերանայումներ	2012-2014 շրջան	1 Հունվարի 2016թ.	Հետընթաց

Ծանոթագրություն՝ ՖՀՄՍ 14 «Կարգավորիչ հետաձգվող հաշիվներ» ստանդարտը կիրառելի չէ Ընկերության համար, քանի որ Ընկերությունը ՖՀՄՍ-ների առաջին անգամ ընդունող չէ:

*ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտ.
 Բացահայտման նախաձեռնություն*

ՀՀՄՍ 1. «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի փոփոխություններն ուղղված են հաղթահարելու ֆինանսական հաշվետվությունների պատրաստողների կողմից իրենց դատողության կիրառման հետ կապված ընդունված խոչընդոտները՝ իրականացնելով հետևյալ փոփոխությունները՝

- պարզաբանվել է, որ տեղեկատվությունը չպետք է աղճատվի՝ այն համախմբելու կամ ոչ էական տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Էականության նկատառումները պետք է կիրառվեն ֆինանսական հաշվետվությունների բոլոր

բաժինների վրա: Անգամ եթե ստանդարտը պահանջում է հատուկ բացահայտում, էականությունը պետք է հաշվի առնվի,

- պարզաբանվել է, որ այս հաշվետվություններում էական հոդվածները կարող են խմբավորվել կամ տարանջատվել, եթե հարկն է և լրացուցիչ ուղեցույց պետք է տրվի ընդհանուր գումարի վերաբերյալ,
- լրացուցիչ օրինակները պարզաբանում են ծանոթագրությունների հերթականության հնարավոր ձևերը, և որ հասկանալիությունը և համեմատելիությունը պետք է հաշվի առնվի՝ ծանոթագրությունների հերթականությունը սահմանելիս, և որ այլևս պարտադիր չէ ծանոթագրությունների հերթականության պահպանումը ըստ նախկինում ՀՀՄՍ 1 պարագրաֆ 114-ում նշված հերթականության:

Սույն փոփոխությունը կիրառելի է 2016թ.-ի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռևս չի գնահատել նշված փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 16. «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 41. «Գյուղատնտեսություն». Բերքատու բույս

ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 41-ի փոփոխությունները սահմանում են «Բերքատու բույս» հասկացությունը և պահանջում, որ գյուղատնտեսական ակտիվները, որոնք բավարարում են «Բերքատու բույս» սահմանմանը հաշվառվեն որպես հիմնական միջոց՝ համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ ՀՀՄՍ 41-ի փոխարեն:

Բերքատու բույսերի վրա աճեցվող բերքը շարունակվում է հաշվառվել ՀՀՄՍ 41. «Գյուղատնտեսություն» ստանդարտի համաձայն:

Ընկերության ղեկավարությունը չի գտնում, որ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 41-ի փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ ընկերությունը չի գրադրում գյուղատնտեսությամբ:

ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 38. «Ոչ նյութական ակտիվներ». Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում

ՀՀՄՍ 16. «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 38. «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտների փոփոխությունները արգելում են, որ Ընկերությունները մաշվածության և ամորտիզացիայի հաշվարկման համար օգտագործեն, կիրառեն կամ հիմնվեն *եկամտի վրա հիմնված* մեթոդի վրա: ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտների փոփոխությամբ հերքվում են այն ենթադրությունները, որ հասույթը մաշվածության կամ ամորտիզացիայի հաշվարկի համապատասխան հիմք է: Այս ենթադրությունը կարող է հերքվել հետևյալ երկու սահմանափակ դեպքերում միայն.

ա) երբ ոչ նյութական ակտիվն արտահայտված է հասույթից չափման միջոցով,

բ) երբ հնարավոր է ցույց տալ, որ հասույթը և ոչ նյութական ակտիվից տնտեսական օգուտները մեծապես կախված են միմյանցից:

Փոփոխությունները ունեն հետադարձ կիրառություն և կիրառելի են 2016թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Այժմ Ընկերությունը կիրառում է մաշվածքի և ամորտիզացիայի հաշվարկի գծային մեթոդը: Դեկավարությունը գտնում է, որ գծային մեթոդը համապատասխան ակտիվներից տնտեսական օգուտների օգտագործման առավել համապատասխան մեթոդն է: Ընկերության ղեկավարությունը չի գնտում, որ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտների փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 11. «Համատեղ Պայմանավորվածություններում ներդրման հաշվառում»

ՖՀՄՍ 11. «Համատեղ պայմանավորվածություններ» ստանդարտի փոփոխությամբ տրվել է ուղեցույց, թե ինչպես պետք է հաշվառվի համատեղ գործունեության ձեռքբերումը, որը իրենից ներկայացնում է բիզնես, ինչպես սահմանված է ՖՀՄՍ 3. «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտով: Մասնավորապես փոփոխությամբ սահմանվել է, որ ՖՀՄՍ 3. «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտի և այլ ստանդարտների (օր.՝ ՀՀՄՍ 36. «Ակտիվների արժեզրկում» կապված ԳՄ ձեռքբերումից առաջացած գույվիլի հետ) համապատասխան սկզբունքները պետք է կիրառվեն:

Փոփոխությունները ունեն հետադարձ կիրառություն և կիրառելի են 2016 հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը չի գտնում, որ ՖՀՄՍ 11. «Համատեղ պայմանավորվածություններ» ստանդարտի փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 9. «Ֆինանսական գործիքներ»

2009թ. նոյեմբերին թողարկված և 2014թ. հոկտեմբերին փոփոխված այս ստանդարտը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման նոր պահանջներ է ներկայացնում: ՖՀՄՍ 9 պահանջում է, որ ՀՀՄՍ 39-ի՝ «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը» համաձայն, ճանաչված բոլոր ֆինանսական ակտիվները հետագայում չափվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են այնպիսի բիզնես մոդելում, որի նպատակն է պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր հավաքագրելը, և որում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը համարվում են միմիայն մայր գումարի և մայր գումարի մնացորդի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ, հիմնականում հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ չափվում են ամորտիզացված արժեքով: Բոլոր այլ պարտքային և բաժնային գործիքները հաջորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չափվում են իրենց իրական արժեքով:

ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա առավելապես վերաբերում է ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունների հաշվառմանը (որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով)՝ կապված այդ պարտավորության վարկային ռիսկի հետ: Մասնավորապես, համաձայն ՖՀՄՍ 9-ի, ֆինանսական պարտավորությունների համար, որոնք հաշվառվում են որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխության գումարը, որը վերագրվում է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, քանի դեռ պարտավորության վարկային ռիսկի փոփոխության ազդեցության ճանաչումն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում չի առաջացնում եկամտի կամ ծախսի հաշվառման անհամատեղում: Ֆինանսական պարտավորության վարկային ռիսկին վերագրվող իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն վերադասակարգվում եկամտի կամ ծախսի: Նախկինում, համաձայն ՀՀՄՍ 39-ի, ֆինանսական պարտավորության՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, փոփոխության ամբողջ գումարը ճանաչվում էր եկամտում կամ ծախսում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման հետ կապված ՖՀՄՍ 9-ը պահանջում է կիրառել սպասվող պարտքային վնասի մոդելը, ի տարբերություն ՀՀՄՍ 39-ի կրած պարտքային վնասի մոդելի: Սպասվող պարտքային վնասի մոդելը պահանջում է հաշվառել պարտքային վնասները, ինչպես նաև դրանցում փոփոխությունները, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ՝ փոփոխությունները պարտքային ռիսկում արտացոլելու նպատակով:

Հեջի նոր ընդհանուր հաշվառման պահանջները պահպանում են հեջի հաշվառման երեք մեխանիզմներ, որոնք այժմ առկա են ՀՀՄՍ 39-ում: Համաձայն ՖՀՄՍ 9-ի ավելի ճկուն են դարձել այն գործառնությունների տեսակները, որոնք ընդունելի են հեջի հաշվառման համար, մասնավորապես ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք համապատասխանում են հեջի հաշվառմանը: Ավելին, արդյունավետության ստուգումը հանվել է և փոխարինվել է *տնտեսական հարաբերություն* սկզբունքով: Հեջի արդյունավետության հետընթաց գնահատում նույնպես այլևս չի պահանջվում:

ՖՀՄՍ 9-ը կիրառելի է 2018թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: Դեկավարությունը կանխատեսում է, որ ՖՀՄՍ 9-ը կկիրառվի Ընկերության ֆինանսական հաշվետվություններում 2018թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և որ այս նոր ստանդարտի կիրառումն էական ազդեցություն չի ունենա Խմբի համախմբված ֆինանսական ակտիվներին և ֆինանսական պարտավորություններին վերաբերող հաշվետվության մեջ ներկայացվող գումարների վրա:

Համախմբման բացառության կիրառումը (փոփոխություններ ՖՀՄՍ 10, ՖՀՄՍ 12, ՀՀՄՍ 28 ստանդարտներում)

2015թ.-ին ընդունված ՖՀՄՍ 10. «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ՖՀՄՍ 12. «Այլ ընկերություններում մասնակցության բացահայտում», ՀՀՄՍ 28. «Ներդրումներ ասոցիացված ընկերություններում և համատեղ ձեռնարկումներում» ստանդարտներում փոփոխություններն ուղղված են ճշտելու այն խնդիրները, որոնք առաջացել են ներդրումային ընկերություններում համախմբման բացառությունը կիրառելիս, պարզաբանելով՝

- համախմբում չիրականացնելու բացառությունը կիրառելի է այն մայր ընկերության համար, որն իր հերթին հանդիսանում է մեկ այլ ներդրումային ընկերության դուստր ձեռնարկություն՝ անգամ եթե ներդրումային ընկերությունը իր բոլոր դուստր ընկերությունները չափում է իրական արժեքով,
- դուստր ձեռնարկությունը, որը մատուցում է ծառայություններ կապված մայր ընկերության ներդրումային գործունեության հետ, չպետք է համախմբվի, եթե դուստր ընկերությունը, իր հերթին, հանդիսանում է ներդրումային ընկերություն,
- ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության դեպքում բաժնեմասնակցության մեթոդը կիրառելիս ներդրումային ընկերությունում ոչ ներդրումային ընկերություն հանդիսացող ներդրող կարող է, որպես ասոցիացված ընկերություն կամ համատեղ ձեռնարկություն, պահպանել դուստր ձեռնարկությունում իր ներդրման իրական արժեքով հաշվառումը,
- ներդրումային ընկերությունը, որը չափում է իր բոլոր դուստր ընկերությունները իրական արժեքով, ներկայացնում է ՖՀՄՍ 12-ով ներդրումային ընկերությունների համար պահանջվող բացահայտումները:

Վերոնշյալ փոփոխությունները կիրառելի են 2016թ.-ի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակաշրջանների համար:

Փոփոխություններ *ՖՀՄՄ 10 և ՀՀՄՄ 28. Ակտիվների վաճառքը կամ նվիրատվությունը ներդրողի և ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ստանդարտներում*

Փոփոխությունները վերաբերվում են այն իրավիճակներին, երբ տեղի է ունեցել ակտիվների վաճառք կամ նվիրատվություն ասոցիացված ընկերության և ներդրողի կամ համատեղ ձեռնարկության միջև: Մասնավորապես, փոփոխությունները նշվում են, որ բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող դուստր ընկերությունում վերահսկողության կորստից առաջացած վնասը, որը ասոցիացված ընկերության հետ գործարքի արդյունք չէ, մայր ընկերության շահույթում կամ վնասում ճանաչվում է միայն այդ ասոցիացիայում չկապակցված ներդրողների մասնակցության չափով:

Փոփոխությունները պետք է կիրառվեն հետադարձ սկզբունքով 2016թ. հունվարի 1-ից հետո ընկած ժամանակաշրջանների համար:

Ընկերության ղեկավարությունը չի գտնում, որ *ՖՀՄՄ 10 և ՀՀՄՄ 28-ի փոփոխությունները* էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՄ 15. «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ»

Այս ստանդարտը առաջին անգամ քննարկման է դրվել 2008թ.-ին: Ստանդարտը վերանայվեց (փոփոխվեց) 2014թ.-ին, այնուհետև՝ 2015թ.-ին: Վերջնական տարբերակը թողարկվել է 2014թ. մայիսին:

ՖՀՄՄ 15. «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ» ստանդարտը, երբ կիրառության մեջ մտնի, պետք է փոխարինի ՀՀՄՄ 18. «Հասույթ» և ՀՀՄՄ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտներով սահմանված հասույթի ճանաչման ուղեցույցներին և կից մեկնաբանություններին:

ՖՀՄՄ 15. «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ» ստանդարտի էական սկզբունքն այն է, որ Ընկերությունը պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Ընկերությունը պատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայմանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների գումարները կստացվեն կամ կհավաքագրվեն Ընկերության կողմից:

Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլ պարունակող մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:

ՖՀՄՄ 15. «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ» ստանդարտը կիրառելի է 2017թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ:

ՖՀՄՄ 15-ը փոխարինելու է հետևյալ ստանդարտներին՝

- ՀՀՄՄ 11. «Կառուցման պայմանագրեր»,
- ՀՀՄՄ 18. «Հասույթ»,
- ՖՀՄՄԿ 13. «Հաճախորդի հավատարմության ծրագրեր»,
- ՖՀՄՄԿ 15. «Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր»,
- ՖՀՄՄԿ 18. «Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից»,
- ՄՄԿ 31. «Հասույթ, գովազդային ծառայություններ ներառող բարտերային գործարքներ»:

Ստանդարտի հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝

- Քայլ 1. ճանաչել հաճախորդի հետ պայմանագիրը,
- Քայլ 2. ճանաչել պայմանագրային պարտավորությունները,
- Քայլ 3. սահմանել գործարքի գինը,
- Քայլ 4. կիրառել գործարքի գինը պայմանագրային պարտավորությունների նկատմամբ,
- Քայլ 5. ճանաչել հասույթը, երբ ընկերությունը ավարտում է պայմանագրային պարտավորությունները:

Ընկերության տնօրինությունը գնահատում է, որ ապագայում ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ» ստանդարտի կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և ծանոթագրությունների վրա: Այնուամենայնիվ ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ» ազդեցության վերաբերյալ արժանահավատ գնահատական տալը կիրառելի չէ, քանի դեռ Ընկերությունը մանրամասն վերանայում չի իրականացրել:

ՖՀՄՍ-ների տարեկան վերանայումներ 2012-2014 ժամանակաշրջան

2012-2014 ժամանակաշրջանի տարեկան փոփոխությունները ներառում են մի շարք փոփոխություններ, որոնք խմբավորված են ստորև.

ՖՀՄՍ 5 փոփոխությունը ներկայացնում է հատուկ ուղեցույց ՖՀՄՍ 5-ում, այն դեպքում երբ Ընկերությունը վերադասակարգում է ակտիվը (կամ օտարվող խումբը) որպես վաճառքի ենթակա կամ սեփականատերերին տրամադրման ենթակա: Փոփոխությունները պարզաբանում են, որ այդպիսի փոփոխությունը պետք է դիտարկվեն որպես օտարման նախնական պլանի շարունակություն, և հետևաբար, ՖՀՄՍ 5-ի՝ վաճառքի պլանի փոփոխության հետ կապված պահանջները չեն կիրառվում:

ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները տալիս են լրացուցիչ ուղեցույց պարզաբանելու համար, թե արդյոք ծառայության մատուցման պայմանագիրը ունի շարունակական մասնակցություն փոխանցված ակտիվում՝ փոխանցված ակտիվների վերաբերյալ բացահայտման նպատակով:

ՀՀՄՍ 19-ի փոփոխությունները պարզաբանում են, որ հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորությունների զեղչման նպատակով կիրառվող տոկոսադրույքը պետք է սահմանվի՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի շուկայական շահութաբերությունը: Բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի շուկայի ուսումնասիրության խորությունը պետք է լինի արտարժույթի մակարդակով (օրինակ՝ այն արտարժույթի, որով պարտավորությունը պետք է մարվի): Այն արտարժույթների դեպքում, որոնց գծով բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի խորը շուկա չկա, պետք է կիրառվի պետական պարտատոմսերի շուկայական շահութաբերությունը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ՝ արտահայտված սահմանված արտարժույթով:

Ընկերության ղեկավարությունը չի գտնում, որ նշված փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունը դեռ չի վերլուծել փոփոխությունների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Ընդհանուր դրույթներ և ՖՀՄՄ-ի առաջին անգամ ընդունումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ) համաձայն, որոնք ուժի մեջ են եղել 2015թ. դեկտեմբերի 31-ին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	483.75	474.97	405.64
Եվրո	528.69	577.47	559.54

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումն այլ արժույթով

Ընկերության ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կրեդիտագրվում է սեփական կապիտալին՝ արտարժույթի վերագնահատման պահուստում:

3.3 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Գույք և սարքավորումներ	1-5 տարի
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-5 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-5 տարի

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝

Համակարգչային ծրագրեր	10 տարի
-----------------------	---------

3.5 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՀՀՄՍ 17-ի՝ «Վարձակալություն», վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ, ավելի ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով՝ գումարած միանվագ վճարները, եթե այդպիսիք կան: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումը, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք

են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի

կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս», «Ֆինանսական եկամուտ» կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

i. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

ii. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններն ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

iii. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են հաճախորդներին տրված վարկերը: Այլ ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

Տրված վարկերը հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ի լրումն, եթե առկա է նշված վարկերի արժեզրկման օբյեկտիվ ապացույց, ֆինանսական ակտիվը չափվում է գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքով: Ավանդների հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

iv. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիչ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են պարտավորությունները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

i. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և փոխառություններ

Պարտավորությունները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

ii. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գույքի և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա

փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

3.9 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Երբ Ընկերությունը մտադրություն ունի վաճառել ոչ ընթացիկ ակտիվներ կամ ակտիվների խումբ և երբ այդ վաճառքի տեղի ունենալը հավանական է 12 ամսվա ընթացքում, ապա ակտիվը կամ ակտիվների խումբը պետք է դասակարգվի և ներկայացվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես վաճառքի համար պահվող ակտիվներ:

Վաճառքի համար պահվող ակտիվները չափվում են ակտիվի՝ մինչև վերադասակարգումն ունեցած հաշվեկշռային արժեքից և «իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից՝ նվազագույնով: Այս ակտիվների գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Այնուամենայնիվ, վաճառքի համար պահվող որոշ ակտիվներ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվները և հետաձգված հարկային ակտիվները, հաշվառվում են սովորականի պես:

Վաճառքի համար պահվող ակտիվների վաճառքից կամ վերագնահատումից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածներում: Վաճառքի դեպքում տվյալ ակտիվի գծով սեփական կապիտալում առկա վերագնահատման պահուստը վերագրվում է կուտակված շահույթին:

3.10 Մեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.12 Ըստիքահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական

ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.13 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարը, գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը:

4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	748,435	297,185
Բանկային հաշիվներ	5,173	1,952
	753,608	299,137

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված, ժամկետանց կամ գրավադրված չեն, դրանց նկատմամբ չկան որևէ սահմանափակումներ: 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի բանկերում տեղաբաշխված այնպիսի միջոցներ, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

5 Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Բիզնես վարկեր</i>		
Իրավաբանական անձիք	3,829	9,498
Անհատ ձեռնարկատերեր	37,269	55,940
	41,098	65,438
<i>Անհատներին տրված վարկեր</i>		
Հիփոթեքային վարկեր	219,486	132,516
Այլ սպառողական վարկեր	208,034	384,627
	427,520	517,143
	468,618	582,581
Արժեզրկման գծով պահուստ	(13,243)	(16,172)
	455,375	566,409

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2015թ. ընթացքում.

Հազար դրամ	Բիզնես վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդը տարեսկզբին	901	15,271	16,172
Չուտ վերականգնում/(ծախս)	4,114	11,579	15,693
Չուտ դուրսգրումներ	(3,056)	(15,566)	(18,622)
	1,959	11,284	13,243

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2014թ. ընթացքում.

Հազար դրամ	Բիզնես վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդը տարեսկզբին	756	9,435	10,191
Չուտ վերականգնում/ծախս	145	(19,109)	(18,964)
Չուտ դուրսգրումներ	-	24,945	24,945
	901	15,271	16,172

5.1 Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազար դրամ	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Չուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ (%)
<i>Բիզնես վարկեր</i>				
<i>Իրավաբանական անձիք</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	3,829	(38)	3,791	1.0%
	3,829	(38)	3,791	1.0%
<i>Անհատ ձեռնարկատերեր</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	30,443	(304)	30,139	1.0%
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր				
- մինչև 90 օր ժամկետանց	1,297	(13)	1,284	1.0%
- 91-270 օր ժամկետանց	5,529	(1,604)	3,925	29.00%
	6,826	(1,617)	5,209	23.7%
	41,098	(1,959)	39,139	4.8%
<i>Անհատներին տրված վարկեր</i>				
<i>Հիփոթեքային վարկեր</i>				
- ոչ ժամկետանց	218,707	(2,187)	216,520	1.0%
- մինչև 30 օր ժամկետանց	779	(8)	771	1.0%
	219,486	(2,195)	217,291	1.0%
<i>Այլ սպառողական վարկեր</i>				
- ոչ ժամկետանց	191,768	(1,918)	189,850	1.0%
- մինչև 30 օր ժամկետանց	3,268	(33)	3,235	1.0%
- 30-89 օր ժամկետանց	6,439	(579)	5,860	9.0%
- 180-270 օր ժամկետանց	6,559	(6,559)	-	100.0%
	208,034	(9,089)	198,945	4.4%
	427,520	(11,284)	416,236	2.6%
	468,618	(13,243)	455,375	2.8%

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Չուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ (%)
<i>Բիզնես վարկեր</i>				
<i>Իրավաբանական անձիք</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	9,498	(342)	9,156	3.6%
	9,498	(342)	9,156	3.6%
<i>Անհատ ձեռնարկատերեր</i>				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	55,940	(559)	55,381	1.0%
	55,940	(559)	55,381	1.0%
<i>Անհատներին տրված վարկեր</i>				
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	132,516	(1,325)	131,191	1.0%
	132,516	(1,325)	131,191	1.0%
Այլ սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	369,491	(11,219)	358,272	3.0%
- մինչև 30 օր ժամկետանց	3,187	(80)	3,107	2.5%
- 30-89 օր ժամկետանց	2,746	(69)	2,677	2.5%
- 90-179 օր ժամկետանց	6,795	(170)	6,625	2.5%
- 180-270 օր ժամկետանց	2,408	(2,408)	-	100.0%
	384,627	(13,945)	370,682	3.6%
	517,143	(15,270)	501,873	3.0%
	582,581	(16,172)	566,409	2.8%

5.2 Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Բիզնես վարկեր

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է աժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Բիզնես վարկերի արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում՝

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

Բիզնես վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս՝ Ընկերությունը հիմնվում է արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Անհատներին տրված վարկեր

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս՝ Ընկերությունը հիմնվում է վարկերի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- անհատներին տրված վարկերի գծով վնասի շարժի դրույքները կայուն են և կարող են գնահատվել վերջին 24 ամիսների ընթացքում կրած վնասի շարժի մոդելի հիման վրա,
- ավելի քան 180 օր ժամկետանց անհատներին տրված վարկերին բաժին է ընկնում 100% վնասի հավանականություն:

5.3 Գրավի վերլուծություն

Բիզնես վարկեր

Բիզնես վարկերը ենթակա են վարկային գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքային որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավն ապահովում է լրացուցիչ ապահովվածություն, և Ընկերությունը, որպես կանոն, գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն բիզնես վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների վերաբերյալ (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների:

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք
Անշարժ գույք	272,009	1,036,010	194,999	816,710
Վարկային երաշխավորություն	73,147	1,291,686	159,052	1,557,421
Ոսկյա իրեր	2,004	3,240	20,808	29,439
Ավտոմեքենաներ	85,143	481,753	197,724	639,275
Շարժական գույք	31,840	73,429	2,582	9,969
Պատրաստի արտադրանք և ապրանքներ	975	14,100	1,858	6,557
Այլ	3,500	-	5,558	-
	468,618	2,900,218	582,581	3,059,371

Վերը ներկայացված աղյուսակը բացառում է լրացուցիչ գրավի անհրաժեշտությունը:

Ոչ ժամկետանց կամ ոչ արժեզրկված վարկերի փոխհատուցելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ՝ գրավի արժեքից, և Ընկերության համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Անհատներին տրված վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը:

Ընկերությունը տրամադրում է սպառողական վարկեր ՀՀ դրամով՝ ապահովված երաշխավորությամբ, անշարժ կամ շարժական գույքի գրավով:

Վարկերի համար ապահովություն հանդիսացող անշարժ գույքի իրական արժեքն առնվազն հավասար է վարկերի հաշվեկշռային արժեքին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ որոշված արժեքը:

Ընկերության քաղաքականության համաձայն՝ վարկերի գումարի և գրավի արժեքի հարաբերակցությունը սահմանվում է Ընկերության վարկային կոմիտեի որոշմամբ:

Բռնագանձված գրավ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը անշարժ գույքի ձեռքբերում չի իրականացրել (2014թ-ին՝ 60,707 հազար դրամ), ինչպես ներկայացված է ծանոթագրություն 6-ում: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնագանձված գրավը ներառված է վաճառքի համար պահվող ակտիվների կազմում:

Ընկերության քաղաքականության համաձայն՝ նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

5.4 Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են Հայաստանի Հանրապետության հետևյալ մարզերում գտնվող հաճախորդներին.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գեղարքունիք	484	5,008
Արագածոտն	822	16,193
Արարատ	8,256	13,420
Արմավիր	6,073	12,153
Լոռի	3,319	3,998
Տավուշ	936	2,595
Վայոց ձոր	941	-
Կոտայք	7,841	10,791
Երևան	439,946	518,423
	468,618	582,581
Արժեզրկման գծով պահուստ	(13,243)	(16,172)
	455,375	566,409

Վարկեր ստացած հաճախորդներն իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գյուղատնտեսություն	6,205	1,379
Առևտուր	24,582	41,573
Արդյունաբերություն	2,241	6,550
Հիփոթեք	219,486	132,516
Սպառողական վարկեր	207,505	383,248
Տրանսպորտ և կապ	2,887	7,935
Այլ	5,712	9,380
	468,618	582,581
Արժեզրկման գծով պահուստ	(13,243)	(16,172)
	455,375	566,409

5.5 Վարկային ռիսկին ենթարկվածություն

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել տրամադրված այնպիսի վարկեր, որոնք գերազանցեին սեփական կապիտալի 10%-ը:

5.6 Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 21-ում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

Վարկային պորտֆելի իրական ժամկետայնությունը կարող է զգալիորեն ավելի երկար լինել պայմանագրային պայմաններով համաձայնեցված ժամկետայնությունից, քանի որ, հավանական է, որ որոշ վարկեր վերանայվեն ժամկետի ավարտից հետո:

6 Վաճառքի համար մատչելի ակտիվներ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բռնագանձված գրավ՝ անշարժ գույք	16,400	60,707
	16,400	60,707

Վաճառքի համար մատչելի ակտիվները բաղկացած են ժամկետանց վարկերի գծով բռնագանձված 1 անշարժ գույքից, որոնք ճանաչվել են բռնագանձման պահին անկախ գնահատողների կողմից գնահատված իրական արժեքներով: Բռնագանձված և այլ գրավների վերլուծության համար՝ տես ծանոթագրություն թիվ 5.3:

Ղեկավարությունն ունի օտարման համար մշակված ծրագիր և համոզված է, որ օտարումը տեղի կունենա հաշվետու ամսաթվից հետո՝ 12 ամսվա ընթացքում:

7 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Գրասենյակային սարքավորումներ և այլ հիմնական միջոցներ	Համակարգչային և այլ տեխնիկա	Այլ հիմնական միջոցները	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	1,353	3,473	133	10,800	15,759
Ավելացում	322	657	182	-	1,161
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,675	4,130	315	10,800	16,920
Ավելացում	108	940	183	300	1,531
Օտարում	-	(41)	-	-	(41)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,783	5,029	498	11,100	18,410
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>					
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	(287)	(1,435)	(15)	(2,312)	(4,049)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(348)	(2,067)	(183)	(1,103)	(3,701)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(635)	(3,502)	(198)	(3,415)	(7,750)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(321)	(1,161)	(84)	(1,289)	(2,855)
Օտարման հետևանքով դուրսգրում	-	41	-	-	41
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(956)	(4,622)	(282)	(4,704)	(10,565)
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	1,066	2,038	118	8,488	11,710
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,040	628	117	7,385	9,170
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	827	407	216	6,396	7,846

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,695 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներն ունեն գրո հաշվեկշռային արժեք, (2014թ.՝ 2,734 հազար դրամ):

Հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկված ծախսերը 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, ամբողջությամբ՝ 2,855 հազար դրամ (2014թ.՝ 3,701 հազար դրամ), ներառված են շահույթի

կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության
 «Մաշվածություն և ամորտիզացիա» հոդվածում: Հիմնական միջոցները գրավադրված չեն:

8 Հետաձգված հարկեր

Հազար դրամ	2015թ.	2014թ.
Տարեսկզբի մնացորդ	1,467	886
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 12)	223	581
Տարեվերջի մնացորդ	1,690	1,467

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2014թ. դեկտեմբերի 31	Շահույթում կամ վնասում ճանաչված	2015թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	210	402	612
Պահուստներ	1,257	(179)	1,078
Չուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	1,467	223	1,690

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2013թ. դեկտեմբերի 31	Շահույթում կամ վնասում ճանաչված	2014թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	210	210
Պահուստներ	886	371	1,257
Չուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	886	581	1,467

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե ԸՆԿերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընկերությունը հաշվանցում է հարկային ակտիվները և պարտավորությունները միայն այն դեպքում, եթե այն ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորություններով հաշվանցելու և հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են միևնույն հարկային մարմնի կողմից գանձվող շահութահարկին:

9 Այլ ակտիվներ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	2,046	804
Հաշվարկներ աշխատակիցների հետ	10	530
Կանխավճարներ այլ հարկերի գծով	394	197
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	-	1,816
Արժեզրկումից պահուստներ	(203)	(314)
	2,247	3,033

10 Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր այլ վարկային կազմակերպություններից	156,321	107,657
	156,321	107,657

Վարկային կազմակերպություններից ներգրավված վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված ՀՀ դրամով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 9.1% (2014թ.՝ 9.27%), ԱՄՆ դոլարով պարտավորություններ չկան:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

Ընկերության տոկոսային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

11 Այլ պարտավորություններ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վճարվելիք գումարներ	3,370	2,479
Պարտավորություններ հարկերի գծով, բացառությամբ շահութահարկի	1,634	2,054
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ	4,610	5,536
Այլազգա ժամանակաշրջանի եկամուտներ	275	264
Այլ	44	43
	9,933	10,376

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

12 Կապիտալ և պահուստներ

12.1 Կանոնադրական կապիտալ

Հայտարարված բաժնեմասեր	2015թ.	2014թ.
20,000 սովորական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ 46,368.1 ՀՀ դրամ	927,362	927,362

Բաժնետեր	2015թ.		2014թ.	
	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)
«Ռեհնսոն Կապիտալ» ՍՊԸ	927,362	100	927,362	100
	927,362	100	927,362	100

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

12.2 Ծահարաժիններ

2015թ. ընթացքում շահարաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել, 2014թ.-ին նույնպես:

13 Ձուտ տոկոսային եկամուտ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Տոկոսային եկամուտ</i>		
Հաճախորդներին տրված վարկեր	105,995	133,761
Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	-	733
	105,995	134,494
<i>Տոկոսային ծախս</i>		
Ստացված փոխառություններ	(114)	(728)
Վարկեր այլ վարկային կազմակերպություններից	(9,187)	(8,135)
Վարկեր ռեպո համաձայնագրերով	-	(266)
	(9,301)	(9,129)
	96,694	125,365

2015թ. տոկոսային եկամտի տարբեր հոդվածների կազմում ներառված է ֆինանսական ակտիվների գծով հաշվեգրված 1,325 հազար դրամ ժամկետանց տոկոսների գումարը (2014թ-ին՝ 1,007 հազար դրամ):

14 Ձուտ առևտրային եկամուտ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի առուվաճառքից եկամուտ	57,885	40,241
Աժանցյալ գործիքներից զուտ վնաս	-	(644)
Աժանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխություն	-	804
	57,885	40,401

15 Այլ գործառնական եկամուտներ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ստացված տույժեր և տուգանքներ	16,526	17,744
Այլ	3,690	1,101
	20,216	18,845

16 Այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր	1,898	2,167
Ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	4,230	4,406
Գովազդի ծախսեր	1,179	363
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	1,917	1,601
Վարձակալության գծով ծախսեր	17,851	16,462
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	2,946	3,158
Խորհրդատվական և այլ ծառայություններ գծով ծախսեր	4,180	1,500
Ներկայացուցչական ծախսեր	41	194
Գրասենյակային ծախսեր	670	1,396
Անդամավճարներ	840	576
Տույժեր ու տուգանքներ	732	2,947
Ապահովագրության գծով ծախսեր	1,147	1,332
Բռնագանձված ակտիվների արժեզրկում	8,400	9
Բռնագանձված ակտիվների իրացման ծախսեր	-	630
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	1,259	1,093
Այլ ծախսեր	625	1,443
	47,915	39,277

17 Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից կորուստներ (արժեզրկման հակադարձում)

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկում/(հակադարձում)	15,693	(18,964)
Այլ ակտիվներ	-	250
	15,693	(18,714)

18 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին	79,518	96,067
Անձնակազմի ուսուցման ծախսեր	15	54
Այլ	-	45
	79,533	96,166

19 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	9,404	15,351
Հետաձգված հարկ	(223)	(581)
	9,181	14,770

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա- վետ հարկային դրույքաչափ (%)	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա- վետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	23,445		66,523	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2014թ.՝ 20%)	4,689	20	13,305	20
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, գուտ	4,492	19	1,465	2
Շահութահարկի գծով ծախս	9,181	39	14,770	22

20 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

20.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Գնահատումները հիմնականում վերաբերվում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներին և չօգտագործված արձակուրդային պահուստին:

21 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկային կազմակերպությունների համար և Ընկերության գործառնությունների կարևոր տարր է: Հիմնական ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, կապված են շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերի հետ:

21.1 Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Ընկերության գործունեությունն ապահովելու համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, այն նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ղեկավարությունն ուղղակիորեն հաշվետու է Խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի, այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	2015թ.		2014թ.	
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
<i>Տոկոսակիր ակտիվներ</i>	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Հաճախորդներին տրված վարկեր	21.60%	19.10%	22.40%	19.50%
<i>Պարտավորություններ</i>				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13.20%	0.00%	13.20%	0.00%

Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը, բացառությամբ լողացող տոկոսադրույքով ակտիվների և պարտավորությունների:

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի 3%-ով (վերազնորոշման ռիսկ) փոփոխության նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
3%		
Շահույթ կամ վնաս	9,369	14,248
Սեփական կապիտալ	(9,369)	(14,248)

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է՝ արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հոդված	ԱՄՆ դոլար	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ բանկերում	40,859	12,826	53,685
Հաճախորդներին տրված վարկեր	77,767	-	77,767
	118,626	12,826	131,452
Զուտ արդյունք	118,626	12,826	131,452

Հոդված	ԱՄՆ դոլար	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ բանկերում	38,517	10,036	48,553
Հաճախորդներին տրված վարկեր	41,638	-	41,638
	80,155	10,036	90,191
Զուտ արդյունք	80,155	10,036	90,191

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2014թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2014թ.՝ 10%) դեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության

վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2014թ.՝ 10%): Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

Դրամի արժեվորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ 10%-ով (2014թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շահույթ կամ վնաս	5,931	1,655

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեվորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառում կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ վարկային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Ընկերության վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Վարկերի համար ներկայացվող դիմումները պատրաստվում են վարկավորման բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից, այնուհետև փոխանցվում են Վարկային կոմիտեին, որը պատասխանատու է վարկային պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական վիճակի ուսումնասիրության վրա: Վարկային կոմիտեն ուսումնասիրում և հաստատում է վարկի դիմումը:

Ընկերությունը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերազնահատում է իր հաճախորդների վճարունակությունը:

Ընկերության վարկային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ բանկերում	753,608	299,137
Հաճախորդներին տրված վարկեր	455,375	566,409
Այլ փոխատվություն	-	250,000
Այլ ակտիվներ	1,853	1,020
	563,107	512,466

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 5.5-ում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կարող է դժվարություններ ունենալ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

Ընկերությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բաժնետերից, բանկերից և այլ

վարկային կազմակերպություններից ստացված վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և վարկավորման պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չգեղջված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է դրամական միջոցների պայմանագրային չգեղջված հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ վարկավորման պարտավորվածությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	Ցլախանց և մինչև				Ավելի քան 5 տարի	Արտա- հոսքի ընդհանուր համա- խառն գումար	Հաշվեկշռային արժեք
	1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի			
<i>Ոչ ածանցյալ պարտավորություններ</i>							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,266	5,281	20,700	119,437	76,903	223,587	156,321
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,370	-	-	-	-	3,370	3,370
	4,636	5,281	20,700	119,437	76,903	226,957	159,691

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	Ցլախանց և մինչև				Ավելի քան 5 տարի	Արտա- հոսքի ընդհանուր համա- խառն գումար	Հաշվեկշռային արժեք
	1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի			
<i>Ոչ ածանցյալ պարտավորություններ</i>							
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,033	3,520	15,267	79,845	52,179	151,844	107,657
Փոխառություններ	83	81	7,145	-	-	7,309	7,164
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,477	-	-	-	-	2,477	2,477
	3,593	3,601	22,412	79,845	52,179	161,630	117,298

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների.

Հազար դրամ	Ցպահանջ և մինչև				Ավելի քան 5 տարի	Ընդամենը
	1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի		
<i>Ակտիվներ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	753,608	-	-	-	-	753,608
Հաճախորդներին արված վարկեր	5,012	40,384	119,794	121,979	168,206	455,375
	758,620	40,384	119,794	121,979	168,206	1,208,983
<i>Պարտավորություններ</i>						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,130	2,828	9,908	76,238	66,217	156,321
Այլ պարտավորություններ	3,370	-	-	-	-	3,370
	4,500	2,828	9,908	76,238	66,217	159,691
	754,120	37,556	109,886	45,741	101,989	1,049,292

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

Հազար դրամ	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	299,137	-	-	-	-	299,137
Հաճախորդներին տրված վարկեր	22,742	51,889	187,770	194,493	109,515	566,409
Այլ փոխատվություններ	-	250,000	-	-	-	250,000
	321,879	301,889	187,770	194,493	109,515	1,115,546
<i>Պարտավորություններ</i>						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,015	2,422	7,398	51,137	45,685	107,657
Փոխառություններ	64	-	7,100	-	-	7,164
Այլ պարտավորություններ	2,479	-	-	-	-	2,479
	3,558	2,422	14,498	51,137	45,685	117,300
	318,321	299,467	173,272	143,356	63,830	998,246

21.2 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են մնանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Հազար դրամ	Իրական արժեքի հիերարխիայի չափում			
	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Իրական արժեքով չափվող ակտիվներ</i>				
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	118,633	118,633	-	-
Ընդամենը	118,633	118,633	-	-
<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>				
Սվոփերի գծով վճարվելիք գումարներ	529	-	529	-
Ընդամենը	529	-	529	-

21.3 Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վարկային կազմակերպությունները, որոնք հրապարակային օֆերտայի միջոցով ներգրավում են փոխառություններ և իրականացնում են կանխիկ արտարժույթի գործառնություններ՝ բացառությամբ գործառնությունների, որոնք կապված են վարկերի մարումների ընդունման հետ, պետք է ապահովեն միայն 1,000,000 հազար դրամ գումարի չափով նվազագույն կանոնադրական և ընդհանուր կապիտալ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 600,000 հազար դրամ): 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ապահովում էր նվազագույն կանոնադրական կապիտալի պահանջները.

այդ ամսաթվերի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 927,362 հազար ՀՀ դրամ:

Ստորև ներկայացված է նվազագույն ընդհանուր կապիտալի նորմատիվի ցուցանիշի հաշվարկը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջների հիման վրա 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական կապիտալ	1,073,425	1,059,161
Ընդհանուր կապիտալ	1,073,425	1,059,161

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել: 2014-2015 թվականների ընթացքում Ընկերությունում վերոհիշյալ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն եղել:

22 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

Իրացվելիության դժվարությունների հետ կապված, ինչպես նաև Հայաստանի շուկայում հրապարակված «տոկոսադրույքի հայտանիշների» բացակայության պատճառով, և ելնելով այն փաստից, որ Ընկերության գործարքների մի մասն իրականացվել է կապակցված կողմերի հետ և առանձնահատուկ բնույթի է՝ իրատեսական չէ որոշել ստացված փոխառությունների իրական արժեքները:

23 Պարտավորվածություններ

23.1 Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ

Ընկերությունը վարձակալել է տարածքներ գործառնական վարձակալությամբ՝ 1-9 տարի ժամկետով: Ընկերությունը վարձակալության ժամանակաշրջանի վերջում հնարավորություն չունի ձեռք բերել վարձակալված ակտիվները:

24 Պայմանականություններ

24.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Ընկերությունն ունի ապահովագրական պոլիսներ բռնագանձված գույքի համար: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24.2 Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

Ընկերության դեմ հարուցվել է մեկ հակընդեմ հայց, որը դատարանի վճռով լուծվել է ի օգուտ Ընկերության:

24.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

24.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Ընկերությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Ընկերությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

25 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են միակ մասնակցին, հիմնական ղեկավար անձնակազմին:

25.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է «Ռեմսոն Կապիտալ» ՍՊԸ կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%-ը: (տես՝ ծանոթագրություն 1):

25.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2015թ. դեկտեմբերի 31-ին և նույն ժամանակաշրջանում ավարտված տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացված գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները.

Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (հաշվեկշռային արժեքով)

Հազար դրամ	Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա ընթացքում տրված փոխա- ռություններ
<i>100 % մասնակից</i>		
«Ռեմսոն Կապիտալ» ՍՊԸ	-	250,000
	-	250,000

Հազար դրամ	Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա ընթացքում տրված փոխա- ռություններ
Գեկավար անձնակազմ և կապակցված անձինք	1,245	1,890
Արժեզրկումից պահուստ	(31)	-
	1,214	1,890

Ստացված փոխառություններ (հաշվեկշռային արժեքով)

Հազար դրամ	Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տարվա ընթացքում տրված փոխա- ռություններ
«Ռեմսոն Կապիտալ» ՍՊԸ	2,100	-
	2,100	-

25.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ՝ «Անձնակազմի գծով ծախսեր» տողում.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	15,181	24,158
	15,181	24,158